ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆՎԱՐ 15, 1894 ԹԻՒ 1

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St. New York, N. Y. Vol. IV, 1894

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄԱՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23d St.,
New York,
U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն

ՊԱՅՄԱՆԸ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրի համար
երկու տոլար կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

"Հայք"— Հայոց Իշխանութեան Վերահաստատութիւնն 1894ին. — Եոզվատի դէպքն —Իրաց ճշգրիտ Վիճակն ի Հայաստան.— Նամակ Բարիզէ. Ուխտագնացութիւն ի Սէն-Տընի. Ատենախօսութիւն Մեծ. Տ. Իսկէնտէրի. Ուղերձ Մ. Ս. Գաբրիէլեանի. — Նամակ Կ. Պոլսէն.— Հայեր Յեգիպտոս.— Նամակ առ Նախագահն Միացեալ Նահանգաց.—Ամերիկայի Հայոց համար. Քաղաքավարական կերպեր այցելութեան և Տեսակցութեան ատեն.— Այլ և այլք.

Only that nation gains true territory,
which gains itself.

Ruskin

Այն ազգն միայն ճշմարիտ հողի կը տիրանայ,
որ ինքն իրեն կը տիրանայ։

Ռըսքին

Թերթիս երիտասարդ բաժանորդներէն մին կը խնդրէ որ «Հայք»ի մէջ ապարդէզ տրուի իրեն որպէս զի Հնչակեան կուսակցութեան դէմ գրէ։ Ի դէպ է որ հրապարակաւ յայտնեմք ինչ որ նմա պատասխանեցինք, որպէս զի ուրիշներ պարապ յոգնութիւն չկրեն յիշեալ կուսակցութեան կամ այլ ոևէ կուսակցութեան դէմ յօդուած գրելու «ՀԱՅՔ»ի համար, զի, քննադատութեանց շրջանն վերջացած է 1893ին հետ. այս տարի աւելի կարեւոր քայլեր առնուլ կը մնայ ՀԱՅՔի։

Նիւ Եորքի ԻՆՏԻՓԷՆՏԷՆԹ շաբաթաթերթին մէջ (Յունվար 4) խմբագրական մի կը փորձէ ցուցնել թէ Թուրքիոյ մէջ կատարուած հայկական յուզմունքն ու ապստամբական ցոյցերն ռուսական միջամտութեան և նոր աշխարհակալութեան առիթ տալու համար կը կատարուին, և կը յորդորէ որ Ամերիկացիք չհամակրին յեղափոխական Հայոց։ Ինտիփէնտէնտի յօդուածն բաղում մասամբ սխալ է, և չեմք կարծեր թէ այդպիսի յօդուածներ կրնան ապահովութիւն հայթայթել միսիոնարական գործոյն ի Թուրքիա։

«ՀԱՅՔ»

Սկսելով չորրորդ տարեշրջանն ուրախ և երախտագէտ սրտիւ կ'ողջունէ իւր աջակիցքն ամէն ուրեք։

«ՀԱՅՔ»՝ շնորհիւ անսպառ համակրանաց մշակեալ երիտասարդաց՝ այժմ զերծ է վտանգէ թէպէտ ազատ չէ նեղութենէ։

Գործն կը մեծնայ. կը խնդրեմք որ մեր գործակիցք ու բարեկամք ևս նոյն համեմատութեամբ աճեցունեն իրենց շանքն ու ճիգ։

*

* *

Ամերիկայի ելմտական անձին նեղութիւնն մեր ամերիկաբնակ հայրենակցաց վերայ ծանր կը կոխէ, գիտեմք, և սակայն կը խնդրեմք որ փութան ի սէր կանոնաւորութեան յղել մեզ բաժնեգիններն անոնք որք դեռ վճարած չեն 1894 տարւոյս համար։

Բաժանորդագիններու կանխիկ վճարումն այնքան մեծ կարեւորութիւն ունի որ մեք ըստիպուած եմք գործադրել մեր արդէն ծանուցուած որոշումն և թերթ չյղել անոնց որք չեն վճարեր։

Ներկայ առաջին թիւն 1894 թուականին անխտիր կը յղուի ամենուն իբրեւ նմոյշ. բայց երկրորդ թիւէն սկսեալ կը դադրեցունեմք անվճար մնացած հասցէներու յղումն։ Այժմէն կը յայտարարեմք զայն որպէս զի անհոգներն յետոյ զմեզ չմեղադրեն։

*

* *

Ուրախութեամբ կը շնորհաւորեմք Հընդկաճնայոց ԱՐԱ ամսօրեայ անգլիերէն հանդէսն որ յաջողապէս շարունակեց և աւարտեց իւր առաջին և դժուարին տարեշրջանն։ ԱՐԱ անխոնջ ուսումնասիրող մ'է Ազգային Քաղաքականութեան, և իւր գրութիւնք լուրջ ուշադրութեան արժանի են։

ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆ 1894ին

Ա.

ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ է յորմէ հետէ Հայոց վերջին իշխանութեան վախճան է եղեր։ Այս տարի պէտք է և հնար է վերահաստատել Հայկական իշխանութիւնն։

Հայե՛ր, մի՛ ժպտիք սկեպտիկօրէն, մի՛տ դիք, և ես ջանամ ցուցնել ձեզ նախ՝ թէ պէտք է, և ապա՝ թէ հնար է Հայոց իշխանութիւն վերահաստատել այս տարի։

Բ

Հայոց Ռուբինեան իշխանութեան վերջանալէն յետոյ ազգին մէջ մնաց եկեղեցական իշխանութիւնն, մնաց նաև տեղական մելիքներու, աղաներու և չորպաճիներու իշխանութիւնն։

Հոգեւոր և աշխարհական կարգի այս երկու իշխանութիւնք ոչ միայն Հայ ժողովրդին այլ և օտարոց կառավարութեան առջեւ յարգելի էին իբրեւ աւանդութեան և բարոյական ազդեցութեան վերայ հիմնեալ հեղինակութիւններ։

Թուրքիոյ մէջ գաւառական առաջնորդն Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին փոխանորդն էր և Բ. Դռնէն վաւերացեալ էր իւր պաշտօն։ Առաջնորդին անօրինութիւնք ժողովրդի կրօնական և կրթական գործոց վերաբերութեամբ ընդունելի էին տեղական իշխանութեան։

Չորպաճին կամ հայ մեծատունն, իւր հարստութեան և սուր իմացողութեան շնորհիւ ունէր տեսակ մի ազդեցութիւն տեղական կառավարութեան վերայ, և յաճախ իւր պատկառելի միջամտութեամբ Թուրք կառավարչի անիրաւ վճիռն կը բեկանէր։

Թուրք կառավարութեան վարչական կերպերն այդ ժամանակ շատ տարբեր էին. Հայ առաջնորդաց և չորպաճիներու համեստ հեղինակութիւնն բնական և թոյլատրելի կը թուէր քանի որ տեղական Քուրդ և Թիւրք պէկերու դրեթէ բացարձակ անկախութեանն իսկ չափ և սահման

դնելու փոյթ չունէր կեդրոնական կառավարութիւնն ։

Սակայն փոխուեցան ժամանակք ։ Բ. Դուռն կամաց կամաց պէկերու իշխանութիւնն հարուածել սկսաւ. տկարացոյց զայնս ամեն ուրեք, և վերջացուց շատ տեղեր ։ Եէնիչէրիներու հաստատութիւնն կործանելէ յետոյ կարգաւ ջնջել ջանաց ամեն փոքր կամ մեծ իշխանութիւն որ ուղղակի կեդրոնէն չի բխիր ։

Այս սկզբան բերմամբ է որ Սուլթան Համիտ Բ մասնաւոր հոգ տարաւ ջնջել Հայոց Սահմանադրութիւնն, ջնջել Հայոց Պատրիարքութիւնն, ջնջել նաև Հայոց Չորպաճիութիւնն ։

Եւ հարկ է խոստովանիլ թէ Փադիշահն իր այդ քաղաքականութիւնն յաջողապէս յառաջ կը տանի դեռ՝ միջազգային բազմահոգ կացութենէն լիապէս օգուտ քաղելով ։

Ամուր լերանց ապաստանած աւազակ Քրդերու հետ ա՛յլապէս կը վարուի ։ Զգալով թէ զինու զօրութեամբ զնոսա ի կատարեալ և տեւական հպատակութիւն բերել անհնար է, նոցա պետերն կը պատուէ և կը ջանայ կանոնաւոր զօրագնդերու վերածել քրդական ոյժերն որքան որ հնար է ։ Սուլթանն յաւէտ անյաջող պիտի մնայ այդ բարբարոսներն կանոնաւոր մասն գործելու իր պետութեան և բանակին, բայց գոհ պիտի լինի եթէ գոնէ կարենայ այս միջոցներով զայնս աւելի մերձ և համակիր պահել իրեն և թոյլ չըտալ որ Հայոց հետ վտանգաւոր խնամութիւն հաստատելու փորձուին ։

Սուլթանի այս քաղաքականութիւնն, Թրքական տեսակէտէ, կրնայ շատ իմաստուն երեւիլ, բայց յոյժ պակասաւոր քաղաքականութիւն է, վասն զի երկրին կառավարութիւնն կը կեդրոնացունէ իր ափի մէջ առանց բարւոքելու զայն ։ Ուրիշ բան կը լինէր եթէ հին կարգերն բառնալով հանդերձ՝ հաստատէր այնպիսի արդար և հաւասարարար վարչութիւն որ բողոքոյ այնքան պատճառ չտար ։ Կառավարական այժմու եղանակն, մանաւորապէս Հայոց մասին, յետին աստիճան յոռի է, զի Հայերն կառավարել չէ պաշտօնն այլ չարչարել ։ Ոչ թէ այս կամ այն յոռի պաշտօնեայն է որ կը նեղէ զիրենք, այլ ամեն պաշտօնեայ գործնական հրաման ընդունած է չարաչարելու Հայոց, և ճնշ-

այս ընդհանուր պաշարման վիճակի մէջ հէք Հայեր զրկուած կը մնան ազգային պաշտպանութեան և զօրեղ միջամտութեան բոլոր հին միջոցներէն ։

Թող արիւնարբու և պղծաշուրթն խնկարկուք ասեն թէ Սուլթանն հայրագութ և լուսամիտ քաղաքականութեան կը հետեւի. մեք գիտեմք թէ նա ահաւոր և ինքնաւեր ոխով կը գործէ գանգատի և պաշտպանութեան բարոյական և օրինական միջոցներէն զրկելով զՀայս և ստիպելով զայնս անօրինական միջոցներով գանգատելու և իրենք զիրենք պաշտպանելու ։

Օր կուգայ որ Սուլթանն երկու քար կ'առնու և կը ծեծէ այն գլուխն որ յղացաւ այս աւերիչ քաղաքականութիւնն ։

Գ

Հայոց ներքին իշխանութեան մխիթարական միացորդներուն ջնջման բովանդակ պատճառն Թուրք քաղաքականութիւնն չէ ։ Ազգային զարգացման նոր վիճակն ալ աննպաստ եղած է ներքին հեղինակութեան ։ Ժամանակաւ հայ ժողովուրդն խորին պատկառանօք կը յարգէր եկեղեցական առաջնորդներուն բարոյական իշխանութիւնն. առաջնորդն մինչեւ անգամ կարող էր գանել և բանտարկել հեռատողն ։ Բայց վերջին կէս դարու մէջ դպրոց և ուսումն նոր սերունդներուն բաւական ստուար մէկ մասին խորհելու կերպերն եղանակաւորեցին. Այլ եւս եկեղեցականութիւնն հին պատկառանքն չազդեր դարուս զաւակաց կամ այսպէս կոչեցելոց. միայն անցեալ դարուց ոգւով ապրողներուն վերայ կը մնայ եկեղեցականին ոյժն ։ Փոքր ի շատէ կարդացող և հասկացող երիտասարդութիւնն պարտական չի համարիր ենթարկել ինքզինք բարոյական իշխանութեանն այն եկեղեցականաց որոց ոչ մտային և ոչ բարոյական վիճակն յարգելի կը գտնէ ։ Անուանին եւս կը խնդրէ նա իրական արժանիք, որպէս զի յարգել կարենայ ։ Դժբաղդաբար եկեղեցականաց մէջ կրթութիւնն՝ բաղդատմամբ ընդհանուր յառաջխաղացութեան՝ յետնեալ է, և այդ է պատճառն որ նոքա չեն կարող ոչ Թուրք կառավարութեան և ոչ հայ ժողովրդեան առջեւ պահպանել հնաւանդ հեղինակութիւնն։ Թէ այս

բացատրութիւն ճշմարիտ է, յայտ է նաև անտի զի արժանեաց և կորովոյ տէր բացառիկ եկեղեցականք ներկայի աննպաստ պայմանաց մէջ իսկ կարող կը լինին պատկառելի լինիլ Հայոց և մինչև իսկ Թուրք կառավարութեան։

Մի՛ լիցի համարիլ՝ սակայն՝ թէ ժողովուրդն անպարտ է, թէ կարդացող երիտասարդութիւնն գովելի է։ Պակասաւոր կրթութիւնն ալ իւր դժբաղդ ազդեցութիւն ունի։ Կիսկատար բացուած աչքերն ալ լաւ առաջնորդ չեն։ Կոյր ժողովուրդն կը հետևէր աւանդական գծէն ընթացող առաջնորդին. իսկ կէս լուսաւորեալ ներկայ երիտասարդութիւնն իրեն ամօթ կը համարի ո և է ուժեք առաջնորդութեան հետևիլ։ Խստապարանոց, հեստող, արհամարհոտ է դարուս զաւակն եղող երիտասարդութիւնն։ Քան զմեզ աւելի զարգացած ազգաց մէջ ալ այժմ նշմարելի է այս, բայց և՛ս առաւել մեր ազգի մէջ։ Կէս լուսաւորեալ մարդն հեղինակութիւն, իշխանութիւն, կառավարութիւն կ՝արհամարհէ, և այս արհամարհանք անիշխանականաց մէջ հասած է իւր յիմարական ծայրայեղութեան, որք կը բաղադրեն թէ որովհետև իշխանութիւնն երբէք կատարելապէս արդար և իրաւ չէ եղած, պէտք է բառնալ ի միջոյ ամեն իշխանութիւն։

Դ

Հայ ազգին արդի անիշխանական և կազմալուծեալ վիճակին պատճառներն են ուրեմն 1) Թուրք կառավարութեան պակասաւոր զարգացումն և հայատեաց ուղղութիւնն. 2) հայ եկեղեցականաց կրթաթական յետնեալ դիրքն. 3) նոր սերնդոց պակասաւոր կրթութիւնն։

Զարմանալի չէ այս կազմալուծեալ վիճակ, որ ազգին կրթական անկիրթ ջանիցն հարկաւոր երախայրիքն է. բայց փոխանցական ժամանակի յատուկ դժբաղդութիւն լինելով՝ չի կրնար մշանջենաւորիլ։ Շրջափոխութեան նոր և լաւագոյն աստիճան մի դալոց է որոյ մխիթարական նախանշանք արդէն կ՝երևին։ Շատնալ ըսկսած են բարձր կարգի կրթութեան տէր անձնաւորութիւնք, և թերակիրթ երիտասարդութիւնն ալ հասունանալով զգօն և հասկացող անհատներու ստուար թիւ մի կը հանէ իւր ծոցէն։ Երիտասարդաց հասկացող այդ դասն ազգային վերածնութեան խնդրոյն ահաւոր մեծութիւնն ըմբռնած լինելով՝ զարհուրանք կը դիտէ իւր այն յետնամնաց և խակ ընկերներ որոց իւրաքանչիւրն ինքզինք կարող կը կարծէ առաջնորդի դեր կատարելու, ազգային տան ճարտարապետութիւնն յանձն առնելու։ Երիտասարդաց հասունացած մասն կը հասկանայ թէ բարբարոսի է իւր տան որմնադիրն՝ հիւսն և ճարտարապետն միանգամայն լինիլ. իսկ տուն կամարքունիք կառուցանելու համար հարկ է աշխատանքի բաժանումն և կազմաւորեալ ու աստիճանաւորեալ աշխատողներու գոր ծակցութիւն։

Երիտասարդաց արագապէս հասունանալուն նպաստող մասնաւոր պայմաններ կան այժմ։ Մահու և կենաց խնդիրն կը յուզի և ամեն հայ, մանաւանդ յարատաահմանի, մտային գործունէութեան մէջ է, կը կարդայ, կը լսէ, կը խորհի ըստ կարի։ Ազգային լրոց համար ծարաւի է ամեն ոք, և շատեր տենչալով կը տենչան փրկութեան միջոցներու և հայրենասիրական աշխատութեան մասին լուրջ և իմաստուն խորհուրդներ իմանալու։ Հասարակ և անուսումն գործաւորներ անգամ թերթի բաժանորդ կը գրուին և եռանդով կը կարդան։ Այս կերպիւ արթուն և գրգռեալ մտքերն սնունդ և այժ կ՝առնուն և մանկական արագութեամբ կ՝աճին ու կը զարգանան։ Բնութեամբ զգօն երիտասարդք, թէև շատ ուսեալ չլլինին, կամաց կամաց դժուար խնդիրներու ոգին կ՝ըմբռնեն և ժողովրդեան բանիբուն դասին մէջ կը մտնեն։

Երիտասարդաց մէջ զգօն և բանիմաց անհատներու աճող թիւն է ներկայի քաջալերական մեծ երեւոյթն։ Ազգին բարձրագոյն անձնաւորութիւններն փրկութեան գործն ի գլուխ տանելու համար անհրաժեշտ պէտք ունին այդ դասուն։

Կառավարել գիտնալ դժուար արհեստ է, սակայն նոյնպէս դժուար արհեստ է կառավարուիլ գիտնալ։ Կառավարուելու, օրէնքի, սկզբունքի հպատակելու համար ժողովուրդն կրթուած զարգացած պէտք է լինի։

Վարիչ լինելու կարող բարձր անհատներ կան, կայ նաև երիտասարդաց հասուն բազմութիւն մի որ վարելի է, այսինքն

ընդունակ է իբրև մարմին գործարանական կապակցութիւն ունենալու գլխոյ հետ։

Կը կրկնեմք թէ Ազգային Իշխանութիւն հիմնելու համար այդ երկու տարրեր, վարիչ և վարեալ լինելու ընդունակ Հայեր փոքր ի շատէ պատրաստուած են։

Եթէ Հայութեան բարձրագոյն արտայայտութիւնն եղող հինգ կամ տասն հոգիներ ի մի մարմին կազմակերպուելով՝ ազգային փրկութեան գործն ղեկավարել սկսին, նոցա կը միանայ հասկացող Հայոց մեծ և անօրինակ բազմութիւն մի իբրև գլխոյ հետ, և այդ իսկ կը լինի Հայոց իշխանութեան և ինքնօրինութեան սկզբնաւորութիւնն։

Ընթերցողաց ոմանք, որոց մէջ տարբեր յոյսեր գրգռուած էին ի տես յօդուածիս վերնագրին, այժմ յուսախաբ եղած կ'ասեն— այդ է ազգային իշխանութեան վերահաստատումն։

Այո՛, կը պատասխանեմք, այդ իսկ է այն իշխանութիւն զոր մեք Հայքս կարող եմք, առանց օտարի օգնութեան, առանց Եւրոպիոյ բարեյօժարութեան սպասելու տալ մեք մեզ։ Եւ այդ կը լինի հաւաստի սկզբնաւորութիւն և փառաւոր նախակրթութիւն աւելի կատարեալ իշխանութեան։

Մեր մշակեալ երիտասարդք անշուշտ վարժուեցան հասկանալու թէ թագաւորութիւն, իշխանութիւն, ինքնօրինութիւն այնպիսի բան չէ որ օտարք չնորհեն ժողովրդի մի, այլ ժողովուրդ մի ինքնին կրթուելով և ներքին զարգացմամբ կը հասնի այն։ Մինքնապաշտպանութեան անկարող և ինքնավարութեան անընդունակ ժողովուրդ մի չի կրնար ազատ լինիլ թէ և ամեն մեծ պետութիւն մի մի թագ ուղարկէ նմա։ Ընդհակառակն, կարող է այժմ մեր ազգ սկսիլ ինքզինք կառավարել ինքն իրեն փրկական ճգանց վարիչ և կազմակերպիչ լինիլ թէպէտ և օտարք չուզեն։ Արդարեւ ո՞ր տէրութիւն կամ զօրութիւն այսօր կարող է արգելուլ զմեզ իրարու մօտենալէ և ազատ հողոյ վերայ վարչական կեդրոն մի ստեղծելէ։ Ինչո՞ւ ուրեմն չփութամք ընծայել մեք մեզ ա՛յն ինքնօրինութիւն որ այսօր հնարաւոր է, փոխանակ սպասելու խղճալի մուրացկանութեամբ որ օտարք գթան ի մեզ։

Ե

Այժմ ընթերցողք կարող են զանազան հարցումներ անել այս մասին։ Մի առ մի նախագուշակելով պատասխանեմք կարգաւ այդ հարցմանց։

Առաջին հարցումն այն կը լինի թէ այդպիսի կեդրոնի մի անդամներն ո՞ւր կը գտնուին։

—Դոքա կը գտնուին ազգին մէջ։ Միթէ հայ ազգին քան զամենայն մեծահոգի և հայրենասէր անհատներէն հինգն կամ տասն գտնել անհնա՞ր գործ է։ ԵՒ զայնս համոզել որ այդպիսի կեդրոնի անդամներն լինին՝ անյուսալի՞ բան է։ Թերեւս այժմ հրապարակի վերայ ծանօթ գործիչներէն ոմանք ևս համոզուին կեդրոնին մէջ մտնել։ Շատ հաւանական է որ Ռուսիոյ մէջ գտնեմք մի քանի ընտիր անդամներ։ Ցոյս կայ թէ ազգին մեծագոյն զաւակաց մեծագունից խորհուրդն ու ազդեցութիւնն պիտի օգնէ առ այս նպատակ։

Երկրորդ հարցումն է թէ հինգ կամ տասն հոգիք այդպիսի պաշտօն յանձն առնլով և իրենց բոլոր ուժերն նուիրելով մեծ գործին, ինչպէս պիտի ապրին։ այժմ ծանօթ մի քանի գործիչներն մեծ նեղութեամբ կրնան գտնել բաւական նպաստ։ եթէ երկուքի կամ երեքի տեղ լինին հինգ կամ տասն գործիչներ, նոցա հաւաքական ծախքն կը լինի ահագին և գայն հայթայթել կը լինի անկարելի։

Այս կասկած ըստ մեզ անտեղի և անվայել է։ Այն ժողովուրդն որ այժմու անկանոն և քիչ օգտակար գործիչներուն չի խնայեր քաջալերը, միթէ տասնապատիկ աւելի առատաձեռնութեամբ չպիտի՞ տայ երբ մեծ ու պատկառելի կեդրոն մի ողջունելու բաղդն ունենայ։ Փորձերն ցուցին ցարդ թէ դրամ տալու յօժարութիւն կայ ազգին մէջ, և մեր հարուստ, միջին և աղքատիկ դասերն անտարակոյս պիտի նուիրեն շատ աւելի մեծ գումարներ երբ տեսնեն թէ գործիչներու կեդրոնական Միութիւն մի, վարչական օրինաւոր մարմին մի կայ որում կրնան կատարեալ վստահութեամբ տալ և հետեւիլ։

Երրորդ հարցումն այն է թէ կեդրոնական վարչութեան անդամներն համաձայն պիտի կրնա՞ն գործել, թէ դժբաղդաբար չուտով պիտի երկպառակին և ցրուին, վատնելով ազգին դրամն ու վըս-

տահութիւնն :

Կը պատասխանեմք թէ այդպիսի մարմնոյ մի քայքայումն այդքան դիւրին չէ : Մեծ խնամով և զգուշութեամբ պիտի կազմուի այն : Անոր մէջ պիտի գըտնուին արդարեւ ազգին հզօրագոյն և ազնուագոյն անհատներէն մի քանին, որք իւրեանց մեծ ոգւոյն ու բարի ազդեցութեամբ պիտի կարենան մարմինն կարգի մէջ պահել : Պէտք է նաև գիտնալ թէ քաջ մշակուած մարդիկ զիրար աւելի դիւրաւ կը հասկանան, և թէ ազնիւ մարդիկ նախանձու և կռուոյ գերի չլինելով՝ միութեան և գործակցութեան բարձր ընդունակութիւն կունենան :

Աւելի կարեւոր հարցում մ'ալ այն է թէ այդ մարմին յանուն ո՞յց պիտի խօսի և գործէ :

Ընթերցողք կը դիտեն թէ կեդրոնական վարչութեան անդամոց ընտրութիւնն չպիտի լինի ընդհանուր քուէարկութեամբ և ոչ ալ գոյ եղող հայրենասիրական ընկերակցութեանց պատուիրակներուն համաժողովոյն ձեռամբ : Ուրիշ եղանակաւ պիտի լինի կազմաւորումն, որոյ բարւոք և յաջող կատարման համար ձեռք առնուած միջոցներն առ այժմ չէ կարելի հրատարակել : Միայն այսչափն վստահութեամբ կարող եմք ծանուցանել թէ եղանակն այնպիսի է որ երբ միանգամ գոյութիւն առնու կեդրոնն, հայրենասէր անհատք պիտի ճանաչեն զայն արժանի իւր բարձր պաշտօնին եւ տեղական ընկերակցութիւնք և յանձնախումբք առ հասարակ, պահպանելով հանդերձ իրենց առանձին կազմութիւն, պիտի միանան կեդրոնին իբրեւ գերագոյն մարմնոյ հետ :

Վերջին և յոյժ կարեւոր հարցում մի ալ պիտի անեն ոմանք թէ ի՞նչ պիտի գործէ և ինչ առաւելութիւն պիտի ունենայ այդ մարմին ցարդ երեւցած կուսակցութեանց և գործիչներուն վերայ :

Այդ հարցման լեցուն պատասխանն շատ երկար կը լինէր : Արդէն ինքնայայտ են առաւելութեանց մի քանին— թէ հինգ կամ տասն ընտրելագոյն անդամներէ բաղկացեալ մարմինն աւելի ուղիղ կը խորհի, աւելի հեռուն կը տեսնէ, աւելի լաւ կը գործէ, աւելի վստահելի և ներշնչող կը լինի ժողովրդեան ամեն դասուն, աւելի ազդեցիկ եւ ակնածելի կը լինի օտարաց : Կայ ուրիշ առաւելութիւն մի որում հարեւանցի միայն ակնարկել կրնամք, այն թէ՝ այդպիսի մարմին մի իւր բարոյական ազդեցութեամբ հզօր եւ ուշադրութեան արժանի լինելով հանդերձ՝ չէ բացարձակապէս ազգային պաշտօնական մարմին, եւ ուստի կարող է ա՛յն կարգի դիմումներ անել Զարին եւ այլ կառավարութեանց որպիսի կարող չէ անել Պատրիարքարանըն : Նաեւ կրնայ այնպիսի գաղտ յարաբերութիւններ ունենալ մայր հայրենեաց եւ արտասահմանի Հայոց եւ օտարաց հետ որոց պաշտօնական յայտնութիւնն չի վընասեր իւր ազդեցութեան եւ կազմութեան . . . :

Կեդրոնի մի գոյութիւնն կարգ մի անտեղութեանց եւս առջեւն կ'առնու : Այժմ մեր ազատական թերթից մէջ այնպիսի բաներ կը գրուին, օրինակի համար մեր վեհ. Կաթողիկոսին քաղաքական դերին Եէզիտներու, Քրդերու Հայոց հետ բարեկամութեան եւ դորին նման խնդրոց վերայ այնպիսի ակնարկութիւններ կը լինին որք անպատշաճ են, բայց որովհետեւ չկայ մարմին մի որում դրեն եւ հաղորդեն հայրենասէր խորհողք այդօրինակ մտքեր, ստիպուած են թերթերու մէջ արտայայտել : Սակայն երբ բաղձացեալ կեդրոնն գոյութիւն առնու, ամեն կողմէ ամենուն դրամին հետ նաեւ մշակեալներու ներքին եւ փափուկ խորհուրդներն պիտի կրնան հոսիլ դէպ ի վստահելի եւ կարող կեդրոնն :

ԵՕԶՂԱՏԻ ԴԷՊՔՆ

Հայոց և Թրքաց միջեւ տեղի ունեցած ընդհարումն ի Եօզղատ մասնաւորապէս նշանակիչ երեւոյթ մ'է : Տեղւոյն կառավարիչն Հայեր ձերբակալեր է ամբաստանելով զայնս իբրեւ հեղինակ գրգռիչ յայտարարութեանց : Առանց դատաստանի առանց փաստի այսպէս անմեղ Հայեր բանտարկել յայտնի հարստահարութիւն է որում չէին կրնար համբերել Հայերն, ուստի և դէմ կ'ելնեն անիրաւ կառավարչին անկանոն ընթացքին և կը մարտնչին : Հեռագրոց ոմանք կ'ասեն թէ մի քանի Թրքեր սպաննուած են կռուոյն մէջ : Հայոց այս առնացի և արդար բարկութիւնն ազ-

դած է Թրքաց և աղդած է նաև Փատի-չահին որ կ'երեւի թէ հասկանալ սկսած է թէ Հայերն առաջի կանացի երկչոտութիւնն թողլով՝ իրաւատէր և արի ժողովուրդ լինիլ սկսած են։ Սուլթանն պաշտօնանկ արած է կառավարիչն որ վայրապար բանտարկեր և զայրացուցեր էր Հայերն։ Ահաւասիկ այս դէպքին վերաբերեալ հեռագրական լուրեր.—

Կ. Պոլսէն Դեկտ. 18ին կը հեռագրեն առ «Տէյլի Նիւզ», Լոնտրա

Ստոյգ է թէ Եոզղատի մէջ ծանր խռովութիւններ պատահած են։ Ճշգրիտ մանրամասնութիւնք կը պակսին, սակայն իմացուած է թէ խռովութիւնն ծագում առեր է փոդոցաց մէջ փակցուած ապստամբական յայտարարութիւններէ։ Եոզղատի միւթասարրիֆն ուզեց քննութիւն բանալ հիղինակներն գտնելու համար, և ձերբակալութիւններ դործեց։ Հայեր ամբաստանեցին զԹուրքս իբրև հեղինակ յայտարարութեանցն, իսկ Թրքերն Հայոց վերայ նետեցին յանցանքն։ Վէճն յանդեցաւ ի կատաղի կռիւ, որ զինուորաց միջամտութեամբ միայն վերջացաւ, երկու կողմէն ալ վիրաւորեալներ լինելէ յետոյ։ Դէպքին տեղեկանալով Սուլթանն պաշտօնանկ արաւ զմիւթասարրիֆն և հարմայեց որ ընդ հսկողութեամբ գայ ի Կ. Պոլիս։ Թէ այս խռովութեանց կարեւորութիւն կը տրուի, յայտ է անտի զի մասնաւոր Յանձնածոդով մի որոյ անդամք են Հիլմի Փաշա (զօրավար), Օսման Փաշա(զօրավար), Հիւսնի Պէյ, Վիսալաքի էֆէնտի և Հաքքի Պէյ, կը մեկնին վաղն դէպ Եոզդատ ամբողջ դործն քննելու պաշտօնով։

Դեկտ. 22. Եոզդատի խռովութեանց մասին նոր մանրամասնութիւններ ստացուեցան։ Կռուոյն մէջ 4—5 Թրքեր ինկած են։ Կռիւն այնքան ծանր էր որ զօրքն ըստիպուեցաւ կրակ անել ամբոխն ցրուելու համար։ Այս դէպք ներքին դործոց նախարարին դիրքն ցնցեր է։

Հեռագիրք կը ծանուցանեն թէ Եոզղատ վօրք կը դրկուի ուր Հայոց և Թրքաց միջև կռիւ տեղի ունեցած էր։ Կայսերական հրովարտակ մի կը պահանջէ որ տեղական Թուրք լրագրեր Բ. Դրան ծացանեն այսուհետև աղբիւրներն այն լրոց զորս կը հրատարակեն։

Մամլոյ ազատութիւնն այսպէս նոր քայլմի կ'առնու Թուրքիոյ մէջ.. դէպ ետ։

ԻՐԱՑ ՃՇԳՐԻՏ ՎԻՃԱԿՆ

Ի՞Ն ՀԱՅԱՍՏԱՆ

Արտասահմանի Հայեր, իւրեանց անցեալ փորձառութեանց յիշատակներու օգնութեամբն իսկ չեն կրնար ճշդիւ հասկանալ հայրենեաց այժմու դառնաղէտ կացութիւնն, որոյ աղօտ պատկերն միայն կուտան հարստահարութեանց այն նկարագրութիւնք որք հազիւ հաւատալի կը թուին մերազնեայց և իբր առասպելաց առասպել կը հնչեն յունկն օտարաց։ Ո՛չ. լաւագոյն թղթակցութիւնք անգամ չեն բաւեր ներկայացուցանել մեզ Թրքահայոց վիճակն ճիշդ որպիսի է այժմ։ Հարկ է անձամբ երթալ տեսնել, կամ գոնէ այդ երկրէն նո՛ր եկած գաւառացի ուղեւորէ մի լսել իւր անձնական փորձառութեանց պատմութիւնն։ Զգօն անձեր, վերջին շաբաթներս Ամերիկա հասած, որտաբուխ բարբառով պատմեցին մեզ բազում ինչ բերան առ բերան, և մեք հայրենեաց վիճակին աւելի ճիշդ և աւելի լայն իմացողութեանն օգնելու համար կը փափաքիմք մեր արդոյ ընթերցողաց կրկնել այդ ահերկբայելի իրողութեանց մի քանին։

Վեր ի վերոյ տեսութեամբ շատ սոսկալի տեսակէ հարստահարութիւն մի չի թուիր ուղեւորութեան նորագիր օրէնքն ի Տաճկաստան։ Սակայն այդ օրէնքին նորագոյն տրամադրութիւններն կը ցուցնեն թէ դիւաչուչ կառավարութիւն մի մինչև որպիսի բռնապետական ծայրայեղութեանց կրնայ հասնիլ եթէ իւր բոլոր հընարիմացութիւնն նուիրէ հպատակներն չարչարելու։

Պարոն Բ գործով կ'ուղէ երթալ ի Կ. Պոլիս, և առ այս կը պարտաւորի 50 օսմ. լիրայի երաշխաւոր տալ թէ Ամերիկայ պիտի չերթայ։ Կը հասնի յիսկէնտէրուն. բայց չի կրնար ի նաւ նստիլ, պէտք է նորէն երաշխաւոր տայ։ Ուղեւորն, անցագիր և երաշխաւորութեան թուղթ ի ձեռին ի զուր կը հաստատէ թէ կատարած է արդէն այդ ձեւակերպութիւն մինչև Կ. Պոլիս երթալու համար։ Պաշտօնեայք կը յայտարարեն թէ իրենք պարտաւոր են, աննկատ արդէն տրուած երաշխաւորութեան, պահանջել նոր ե-

բաշխաւոր։ Մեր ճանապարհորդն ուրեմն կը բռնադատուի երկրորդ երաշխաւոր մի ալ անդ գտնել դարձեալ 50 ոսկւոյ համար։ Երկրորդ օրինական թուղթն առած կը դիմէ դէպ ի նաւն որ մեկնելու վերայ է, և ահա, ի մեծ ցաւումն իւր, պաշտօնեայ մի կը ցուցնէ թէ թուղթն թուական չի կրեր։ Հարստահարեալն վայրապար կաղաչէ որ մոռուած թուականն պաշտօնեայն ինքն դնէ․ կը ստիպուի ճեպել ի պալատ և մեղադիր ձայնիւ դիտել կուտայ քարտուղարին զանցառութիւնն որոյ վասն ի վտանգի է նաւուն չհասնելու։ Զարարարն պարզապէս կը պատասխանէ թէ իրեն հրահանգ տրուած է այդպիսի կամաւոր զանցառութիւններ գործել յատկապէս Հայոց տագնապ պատճառելու համար, և եթէ զանցառութիւններն զանց անէ, իբրեւ անհոգ պաշտօնեայ կը վռնտուի։ Զայս խոստովանութիւն արած է քարտուղարն՝ անձնապէս ծանօթ լինելով ուղեւորին։ Յետ ձանձրալի նեղութեանց Պոլսոյ ցամաքն ելնելու կը յաջողի, և սակայն հազիւ փոքր ինչ հանգչած է հիւրանոցին մէջ երբ պաշտօնեայք կը հանին և հիւրանոցին յայն տնօրինէն կը պահանջեն 50 օսմ․ ոսկւոյ համար երաշխաւոր լինիլ թէ Հայն Ամերիկա պիտի չերթայ․ տնօրէնն կը ստորագրէ օրինական թուղթն, և մեր հայրենակից կարող կը լինի մնալ անդ և աշխատիլ կատարելու մասնաւոր գործն որոյ համար գնացած էր ի Մայրաքաղաքն։ Բայց որովհետեւ կառավարական այս ինչ պաշտօնէից ձեռքով պիտի կատարուէր գործն, կը տեսնէ թէ նորա շաբաթէ շաբաթ կը յետաձգեն տնօրինութեան նոյն իսկ նախնական քայլերն առնուլ։ Համբերութիւնն կը սպառի, և թէպէտ բնաւ մտադիր չէր երկրէն հեռանալու երբ ուղեւորութիւնն սկսաւ, կ'որոշէ խոյս տալ այդ անտանելի ձեւակերպութեանց ցանցէն և կը յաջողի՝ կաշառքէ շնորհիւ՝ փախչիլ գալ յԱմերիկա։

Մէկ ուղեւորի փորձառութեան այդ հակիրճ պատմութիւն ո՛րքան բան կը պատմէ մեզ։

Երբէք այդպիսի օրէնք լսո՞ւած է ո և է երկրի մէջ թէ մարդ, վաճառական, լուսանկարիչ, բժիշկ պարտաւոր լինի քաղաքէն դուրս ելնելու համար երաշխաւոր տալ, և երկրորդ, երրորդ, չորրորդ երաշխաւոր տալ իւր ուղեւորութեան գծին վերայ գտնուող այնպիսի քաղաքաց մէջ ուր ծանօթ իսկ կրնայ չունենալ։

Այդ բաւական չէ․ ի լրումն անօրինութեան կան դեռ ուրիշ կառավարական տնօրինութիւններ։ Ձեւակերպութիւններն բազմապատկած և զայնս կատարելու եղանակներն ալ կատարելագործած են։ Եւ կատարելագործութիւնն յայտ է որ հաւատարիմ պաշտօնեայք երբ Հայու գործն կատարելու առիթ ունենան հետեւեալ հրահանգաց համեմատ շարժին— նախ, գործն յետաձգեն, այսինքն, գործն սկսելու լաւագոյն կերպն համարին չսկսիլ․ երկրորդ, երկարաձգեն, խեղճ Հայն խնձորի պէս իրարու գլորեն և գրօսնուն․ երրորդ, առանց կաշառքի գործ չանեն․ չորրորդ, գործողութեան մէջ վերջապէս թերի կամ առարկելի կէտ թողուն, այսինքն գործն վերջացունեն առանց վերջացունելու։

Այդ գործողութեանց միջոցին Հայուն հետ խօսելու և վարուելու եղանակներն ալ կատարելագործուած են։ Հայուն հետ քաղաքավար կամ շնորհքով վարուիլ այնքան ասօրէն է որքան գործն հաւատարմութեամբ և փութով կատարելն։ Ժամանակին թուրք պաշտօնեայք Հայուն հետ խիստ կը խօսէին եթէ առիթ ունենային խստանալու, այժմ շարունակ խիստ և դառն լինելու հրահանգ ունին։ Երկու Ուղեւոր ընկերներ երբ Պոլիս հասան, ոստիկան մի հարցաւ թէ որ քաղաքացի են — մին և միւսն պատասխան տուին․ և ոստիկանն կրկնեց— աւելի՛ աղբ լինիք (Տըհա՛ պօգ օլասընըզ։)

Պատրիարքութիւնն և գաւառային առաջնորդութիւնն ջնջեցին․ կը ջնջեն նաև չըպլաճիութիւնն։ Հայք պաշտպանութեան ամեն տեսակէն ու ամեն աստիճանէն բոլորովին զրկուած են այժմ։ Կառավարութիւնն իւր սուրն դրեր է մեծատան կրծքին և կը կողոպտէ զայն ճակատաբաց անամօթութեամբ։ Վերջին երկու կամ երեք տարուան մէջ այս կերպիւ կողոպտեալ և փճացած Հայ հարուստներու պատմութիւնն ստուար հատոր մի լեցունելու հերիք է։ Պատուաւոր և հարուստ վաճառական մի երեւակայական յանցանքի համար նետեցին ի բանտ ․․․ քաղաքին մէջ, և հետեւեալ պարզ խորհրդածութիւնն ներկայացուցին նմա․— եթէ բանտարկեալ մնաս երկու ամիս, գործիդ առ

նուազն 500 լիրայի վնաս կը լինի· բայց եթէ այժմ մեզ վճարես 200 լիրա, խոյն կ'արձակուիս և այսպէս 300 լիրայի շահ կ'ունենաս։ Մտածէ', խենթութիւն մի' աներ: Մարդն կը մտածէ և խենթութիւն կամ ոչ, կը վճարէ 200 լ.։ Ոչ շատ ժամանակ յետոյ նորէն կը բանտարկեն զինքըն, և նորէն կը կողոպտեն, մինչև որ մեծատունն կը տնանկանայ և խենթն կը խելօքնայ . . .: Միևնոյն քաղաքին մէջ ուրիշ հարուստ և կալուածատէր հայ մի, որոյ կարողութիւնն 10 հազար ոսկի կը հաշուէին, բանտարկեցին իբրև գաղտնի պարագլուխ խռովարարաց (մարդն բնաւ մասնակցութիւն չունէր ազգային շարժմանց,) և նորա բոլոր կալուածներն զանազան խաբէութեամբ յափշտակեցին · մի քանի տարի առաջուան այդ փարթամ մարդն այժմ չքաւոր ոք է։

Այս ամենն անհերքելի ապացոյց են թէ հարստահարութեանց ներկայ քայքայիչ յորդումն ի Թուրքիա տեղական պաշտօնէից զեղծման արդիւնք չէ լոկ, այլ արդասիքն է այն համակացողութեան թէ հայաւեր զեղծումն հաճելի ծառայութիւն է յաչս վերնագոյն հեղինակութեան: Յոռեգոյնքն պաշտօնէից կ'ընդունին փառաւորագոյն վարձատրութիւններ ի բարձուստ, և պաշտօնակիցք նոցա կ'ըմբռնեն թէ Հայոց հանդէպ կրծան և գազան լինիլ ո՛րքան շահաւոր և պատուաբեր միանգամայն է իրենց։

Երբ երկրի մի բարձրագոյն հեղինակութիւնն այդպէս կը սրբագործէ պաշտօնական շրջանաց զեղծումներն, յայնժամ է լրումն չարեաց։

Ահաւոր և ոսկալի տեսարան մի աշխարհի առջև կը պարզէ Թուրքիա ուր չարիքն ոտացած է իւր լրումն և ուր յարդահոս պղծութիւնն ի բաց վտարած է արդարութեան և օրինաց յետին մնացորդներն։

Տիեզերական Խաղաղութեան Միութիւնն կ'աշխատի պետութեանց դեսպանաժողով մի անել տալ 61դ յօդուածի գործադրութիւնն հոգալու համար։ Միութեան քարտուղարն Է. Ֆ. Գտրըն նամակներ ուղղած է առ այս նպատակ Մեծին Բրիտանիոյ, Գերմանիոյ, Ֆռանսայի, Իտալիոյ, Ռուսիոյ և Թուրքիոյ դեսպանաց որ ի Ուօշինկթըն։

ՆԱՄԱԿ ԲԱՐԻԶԷ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի ՍԷՆ-ՏԸՆԻ

Բարիզ, 5 Դեկտ. 1894

Լևոն Թագաւորի մահուան 500դ տարեդարձի առթիւ գնացինք յուխտ ի Սէն-Տընի Նոյ. ամսոյ 26ին, կիւրակէ օրն։ Յիսունէ աւելի թուով հայազգիք՝ գաղթականութեանս ամեն դասերէ բաղկացեալ։ Բարիզու Հայոց հովիւն Արժ. Տէր Սահակ վարդապետ Իւթիւճեան՝ հոգեհանգստեան պաշտօն կատարելէ յետոյ՝ քանի մի բառ խօսեցաւ աւուր պատշաճի և խօսք տուաւ Աւագ Սարկաւագ Տէր Կարապետի (որ հինգ տարիներ Լոյբցիկ աստուածաբանութիւն ուսանելու համար ուղարկուած է յէջմիածնէ և ուսումներն անդաւարտելէ յետոյ եկած է ի Բարիզ նոյն գիտութեամբ քանի մի ամիսներ ալ աստ զբաղելու նպատակաւ) որ երկար և գեղեցիկ ճառախօսութիւն մի արաւ և անցեալ ազգային աղէտից վերայ խօսեցաւ պատմական, փիլիսոփայական և մանաւանդ կրօնական տեսակէտիւ։ Ապա Սիրոյ և Միութեան վերայ ատենախօսեց Մեծ. Տէր Յ. Իսկէնտէր, և վերջապէս կարդաց նաև ՀԱՅՔի խմբագրին ուղերձն զոր այս առթին համար գրած յղած էր։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԵԾ. ՏԵԱՌՆ ԻՍԿԷՆՏԷՐԻ

Տեարք իմ և եղբարք հայրենակիցք,

Բաւական տարիներէ հետէ սովորած էինք արդէն՝ իբր ցմի ազգային նուիրական ուխտագնացութիւն՝ գալ և բոլորիլ այս գերեզմանիս շուրջը և յիշել և արտասուել մեր ազգին անցեալ և կորուսեալ փառացը վրայ: Բայց այս անգամու հաւաքումը, այս օրուան այսքան հոծ բազմութեամբ և յուզեալ սրտերով աստ գումարելնիս՝ սովորականէն աւելի տխուր հանդիսի մի ձևն կ'առնու զի հինգհարիւրամեակն է այսօր մեր վերջին թագաւոր դժբաղդ Լևոնի մահուան, և միանգամայն, ափսո՜ս, հինգհարիւրամեակն ևս անկման մեր ազգին։

Հինգ դարեր, ո՜հ ինչ երկար շրջան տարիներու՝ յորմէ հետէ չիջած է Հայոց

բաղդին ջահը, յորմէ հետէ հանապազ և անդադար անողորմ լուծի մը տակ հեծէ ազգս։

Այս հինգ հարիւր ամերու շրջին մէջ սակայն՝ ո՛րքան յառաջդիմութիւն՝ ընդ աշխարհ համօրէն։ Ինչ էին հինգ հարիւր տարի առաջ այժմեան հզօր ազգեր և արդի ահեղ թագաւորութիւններ, ինչպէս Գաղղիա, Անգղիա, Գերմանիա, Ռուսիա և Իտալիա, եթէ ոչ՝ փոքր իշխանութիւնք և տկար զօրութիւնք որք սակայն միշտ յառաջադէմ քայլեր առին, բազմացան, մեծցան և հզօրացան։

Եւ այն ազգեր անգամ որ երբեմն մեզ բաղդակից, մեր հետ անկած և մեզ նման ընկճեալ և հարստահարեալ ժողովուրդներ էին, գլուխ ի վեր ամբարձին այս դարուս մէջ և վերականգնեցին իրենց ազգութիւնը և իրենց ինքնիշխանութիւնը։ Ահա Յունաստան, Ռումանիա, ահա Սերպք և Պուլկարք, որք մեզ նման ջախջախեալ, կործանեալ, ստրուկ ազգեր էին, հետզհետէ թօթափեցին հարստահարական լուծը և փրկեցան ժանտաժուտ բռնաւորին ձեռքէն։ Իսկ, եղո՛ւկ, թշուառ Հայաստան միայն, միշտ գերի, միշտ ոտնահարեալ՝ հեծէ և հիւծի բարբարոս նուաճողին ջախջախիչ հարուածոց տակ։

Սակայն, Տեարք իմ և եղբարք հայրենակիցք, չյուսահատիմք և չվհատիմք երբէք, զի տակաւին կենաց նշոյլ կայ և յուսալու պատճառ թէ օր մի վերստին յոտն պիտի կանգնի մեր ազգն և թօթափէ իւր պատանքը։

Եթէ յիշենք այն ազգերը որք ծնան, մեծացան և հզօրացան մեզմէ շատ ետքը և այս հինգհարիւրամեակին միջոցին, եթէ յիշենք զայնոսիկ ևս՝ որք իրենց ազատութիւնը և քաղաքական կեանքը վերստին ձեռք բերին, սակայն չմոռնանք ևս յիշել թէ ի հնուց մեր շուրջը քանի քանի մեծ, հզօր, ահեղ ազգեր և թագաւորութիւններ անկան և մեռան։ Սակայն մեր ազգն՝ թէպէտ յաղթեալ և գերի, տակաւին կեայ և ապրի։

Այո՛, պիտի ապրի մեր ազգն և օր մի դարձեալ պիտի դալարի, պճնի երփներանգ ծաղիկներով, եթէ ջանամք և աշխատիմք զի արմատն և կոճղն չցամքին երբէք։

Ուրեմն, եղբարք իմ, մեր ամեն հոգածութիւններ, մեր ամեն փոյթն ու ջանքն ի գործ դնեմք կենդանի պահելու մեր ազգութիւնը, և անշուշտ պիտի գայ ժամանակն՝ որ մե՛ր ճիգք և վաստակք պիտի պսակին լիովին։ Այլ որպէս զի վայրապար վաստակած չլինիմք և ի զուր վատնած մեր ուժերն, և որպէս զի ունելի շուտ և արագընթաց գայ այն ուրախաբեր և աւետաբեր օրն, միացնենք ընդ փոյթ մեր բոլոր ուժերն ու ճիգերն, և հանապազ սիրով և միութեամբ աշխատիմք և գործեմք. զի սէր և միութիւն զօրութիւն է։

Սիրեմք զմիմեանս, յարգեմք և պատուեմք համայն մեր ազգայինս, սիրեմք և մեծարեմք մեր մայրենի լեզուն, սիրեմք մեր հայրենական պատմութիւնն, վերջապէս յարիմք և փարիմք այնմ ամենայնի որ Հայութեան պատկանի։

Սէր առ մեր լեզուն, զի մեր բարբառն է մեր ազգութեան յատկանիշն և բուն իսկ մեր հայրենական ժառանգութիւն, ուստի պահպանեմք զայն միշտ մեր մէջը, մշակեմք ըստ կարելւոյն և լինիմք նախանձախնդիր մեր լեզուին և գրականութեանը։

Սէր և առ մեր ազգային հնաւանդ տոհմական պատմութիւնն, առ մեր նախահայրս, առ մեր վեհ դիւցազունս, առ մեր արի թագաւորս և քաջազան իշխանս, առ մեր սուրբ հայրապետս և քաջ վարդապետս, առ այն ամենայն վերջապէս որ մեր ազգութեան ոչ միայն պարծանքն, այլ և կեանքն և էութիւնն եղած են, առ այն ամենայն ասեմ, որ ազգութիւն կազմեն։

Եւ քանի որ մեր հոգիք հայութեամբ սնանին, մեր սրտեր Հայութեամբ տրոփեն, մեր մտքեր և մեր գործեր միշտ և միայն հայութեան շահին և փրկութեան ուղղուին. գոհանամք լիովին և անել ինչ չըփնտռեմք ի սնոտիս, զի չունիմք աւելորդ ոյժեր, մերժելու, ցրուելու և հեռացնելու ի մէնջ։

Ո՞վ է այն յառաջացեալ, քաղաքականացեալ ազգն, որ հանրային ազգային խնդրոց և գործոց մէջ կրօնական խտրութիւն որոնէ կամ մուծանէ։

Կրօնք և ազգութիւն, ուղղակի առնչութիւն չունին միմեանց հետ։ Դեռ վերջերս ազատամիտ հոգեւոր բարձրագոյն հեղինակութիւն մի կասէր առաջի բազմագումար հանդիսականաց «եթէ ումն Մով-

սխալական կրօնք ևս դաւանի և ասէ թէ Հայ է և իբր հայ զգայ և գործէ, սիրեցից զնա իբրև իմ հարազատ որդի :»

Ուստի ի բա՛ց ի մէնջ խտրութիւններ, հեռի՛ երկպառակութեան և ոյժերու անջատման պատճառներ, լինիմք միացեալ սրտով, մտօք և հոգւով, միմեանց վերայ կատարեալ վստահութեամբ, աշխատիմք ամենեքեան միաբան սիրով և համերաշխութեամբ յօգուտ և ի փրկութիւն ազգիս :

Ողջամիտ և հասուն խորհուրդ տըւողներն, խօսքով և գրով վաստակողներն, օտարաց սէրն և համարումն հրաւիրողներն, տէրութեանց օգնութիւնը հայցողները, ի դաշնագրոց և յօրինաց զօրավիգն խնդրողներն, նոյն իսկ պարզ դրամական օժանդակներն, ամենն ալ պիտանի և օգտակար են ազգային դատին, ինչպէս յանդուգն և եռանդուն գործիչներն :

Արդէն, թո՛ղ ամէն ոք իւր խղճին, դատողութեանը և կարողութեանը համեմատ շարժի և գործէ, սակայն որ անհրաժեշտ է, այս է որ ամէն ոք՝ առանց փախստական պատրուակի, աշխատի այդ երկու ճիւղերուն միոյն մէջ, և ոչ թէ անտարբեր մնայ, զի հայրենասիրութիւնն նուիրական պարտք մ'է, և որ անոր փախուստ տայ և անտարբեր մնայ, վատ է :

Ուստի մեզ նշանաբան դնելով ՍԷՐ և ՄԻՈՒԹԻՒՆ, ամենեքեան առ հասարակ՝ կատարեալ անձնուիրութեամբ և լիովին զոհողութեամբ, առանց անձնական փառասիրութեան կամ առանց թաքուն խորհրդի կամ նպատակի, վաստակիմք վասն մեր սուրբ դատին, որ է փրկութիւն հայրենեաց :

Եւ Դու, Թշուառ Թագաւորդ Հայոց, որ քամեցիր ամենայն դառնութեանց բաժակն, և որ հինգ հարիւր ամերէ հետէ հանգչիս աստ՝ ասպնջական սակայն օտար հողի վերայ, դուցէ օր մի (իցիւ թէ մօտ օր մի) հրճուիս ոսկերոտիքդ, տեսնելով ի շիրմէդ Հայաստանի փրկութիւնը և քու որդոցդ ազատութիւնը :

ՈՒՂԵՐՁ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

Արքայ,

Այսօր ի չորից ծագաց աշխարհի Հայք կը դարձունեն իրենց աչեր դէպ ի շիրիմդ, ուր կը հանգչիս 500 տարիներէ ի վեր :

Դու, վերջինդ ի Թագաւորս Հայոց, արութեամբ դիմադրեցիր թշնամեաց ահեղասաստ հեղեղին ցորչափ հնար էր, և յետ քամելոյ զմրուր ազգային թշուառութեան բաժակին, թափառեցար յուսով ընդ Եւրոպա, բախեցիր արքունի դռներ, արքայական սրտեր, և ցաւագին յուսախաբութեամբ զվախճան աւուրցդ տեսար :

Կը հաւատամք թէ աչերդ առ յաւէտ կափուցանելէ առաջ՝ վերջին ակնարկդ դէպ ի տեսարան հայրենի աղխից դարձուցիր և դէպ ի կործանեալ գահն հայկական իշխանութեան :

Եւ հինգ հարիւր տարի է որ ի շիրմիդ կը սպասես ու կը յուսաս :

Դու որ յուսահատական բանտէն շըղթայազերծ դուրս ելար, կը յուսաս թէ գերեզմանէդ ևս հնար է քեզ յառնել անշղթայ և ազատ :

Մեք հայ ժողովրդի ներկայացուցիչքս աստ ժողովեալ անձամբ և մեր եղբարց անհամար բազմութիւն հոգւով պար առած շիրմիդ շուրջ, ամենեքին աւետի՜ս կը բերեմք քեզ յանուն Տեառն և կը մարգարէանամք զքո յարութիւն փառաւոր :

Ո՛ նշխարք Լեւոնի, նշանա՛կք Հայոց քայքայեալ ինքնօրինութեան և ցրուեալ ժողովրդեան, մերձեցէ՛ք ոսկր առ ոսկր, ո՛ն, ջիղ, մարմին և մորթ առէք և թող կանգնի Լեւոն իւր ոտից վերայ :

Թող կարծէ աշխարհ թէ արդ հասեալ իցէ Հայ քաղաքական մարմինն, մարմին մեռեալ և բուռն փոթորկօք ի սփիւռս աշխարհի ցրուեալ, անյօդ, անյար և անշունչ, ճիշդ հանգոյն Լեւոնի քայքայեալ մարմնոյն :

—Իսկ մեք, հայ եղբարք, այսօր ի 5դ դարադարձի աստ մահուանն Լեւոն արքայի, մտօք, սրտիւ և հոգւով կը շարժիմք, կը մերձենամք միմեանց, կը յօդիմք, կը միանամք և շունչ ու կեանք կ'առնումք իբրև Հայութիւն : Ե՛կ, եղբայր իմ, տուր ինձ քո ձեռքն, և դու սիրեցեալ արենակից, առ իմ ձեռն, տամք ամենքս ձեռն ի ձեռն և ի նշան այն Սիրոյ Կապին որով մեր ամենից սիրտք ու շահք կապուած են իրարու, աստ, ի վսեմ պա-

հուս, պսեմք միաչունչ—

Եղբայր եմք մեք՝ բոլոր Հայեր,
Ո՛չ ես ի մեզ մահարայր հեռ.
Եղբայր եղբօր մեք անձնուէր՝
Յաւերժական արդ կ'ուխտեմք ՍԷՐ։
Եղբա՛յր եմք մեք ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐ,
Լո՛ւր, դու, Լե՛ւոն, և Դո՛ւ, ով ՏԷՐ,
Ի ձեռին ՍՈՒՐ, ի սրտի ՍԷՐ՝
Կ'ուխտեմք կանգնել ՀԱՅՐԵՆԻՔ մեր։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

2 Դեկտ. 1893

Քոլերան սարսափն կը շարունակէ տակաւին։ Աննշան անհանգստութիւն մի բաւ է մահացու հիւանդութեան դառնալու շնորհիւ արտաքոյ կարգի ճարտար կարգադրութեանց . . ։ Ցարդ իբր հնտախտէ մեռելոց թիւն 3 հազարի կը հասնի, ըստ պաշտօնական տեղեկագրութեանց, և մեռած Հայերու մեծ մասն գաւառացի են։ Կ'երեւի թէ քաղաքապետութեան բժիշկներն մի դիւաչունչ դեր կատարած են հայ պանդուխտներու վրայ։ 32 բժիշկներ բողոքեցին քաղաքապետութեան բժշկաց դեղահատներուն համար, և ձերբակալուելով ի պալատ տարուեցան հարցաքննուելու։ Ռըսթվան փաշա (Կ. Պոլսոյ քաղաքապետ), յանցաւոր կը ցուցուի։

Աշըգեան Պատրիարք Եպարքոս Ճէվտէթ փաշայի մօտ նոր դիմում մ'արաւ մի քանի եպիսկոպոսներ և վարդապետներ Պոլսէն հեռացունել տալու, բայց դարձեալ անյաջող մնաց։

Պատրիարքարանի տրկղն օրերս խօսքի նիւթ է։ Սիմոն Մաքսուտ Պէյի մօտաւոր ազգականներէ մին, Երուանդ անուն երիտասարդն, օգնական արկղակալ է, և զօրաւոր կասկած կայ թէ սորա անպարկեշտ մատունք, երկրորդ բանալւոյ մի միջոցաւ արկղին ներսերն գաղտնի երթեւեկութիւն կատարած են։

Երկու օր առաջ Տրապիզոն յղուեցաւ հաճի Կարապետ Լուսինեան անուն անձը, որ հացագործութեամբ կը զբաղէր աստ, Երզնկայի զինուորական ատեանը ուզած է զայն, որպէս թէ հաճի Գալուստ Արխանեանի խնդրոյն մասնակցութիւն ունեցած է։

Անտոն Ռշտունի մի քանի օրէ ի վեր Թօքատապէ կը տառապի, և փոխադրուած է Կեդրոնական բանտի հիւանդանոցն

Կ. Շ.

ՀԱՅԵՐ ՅԵԳԻՊՏՈՍ

Գահիրէէն ուղղեալ է մեզ թղթակցութիւն մի Դեկտ. 14 թուակիր զոր տեղւոյ անձկութեան պատճառաւ չկարենալով ամբողջ հրատարակել, կուտամք միայն համառօտ բովանդակութիւնն։

Նորահաստատ «ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ» որոյ նպատակն է ընթերցարան և գրոց թանգարան մի հաստատել ի Գահիրէ, եռանդեամբ կը շարունակէ իւր պատրաստութիւններ և յօգուտ այդ ձեռնարկի թատերական ներկայացում մ'է տուեր Դեկտ. 10ին։ Ներկայացումն տեղի ունեցեր է Խտիվական Օբէրային մէջ և ստուար թիւ մի ունկնդրաց ներկայ գտնուելով մեծ գոհութեամբ վայելեր է զԴուրեանի «Արշաւանք Պարսից ի Հայս»։ Զուտ հասոյթ եղած է 55 անգլիական ոսկւոյ կլորիկ գումար մի։ Կազմակերպիչ մասնախումբն և անձնուէր դերասանք մեծ շնորհակալութեան արժանի են։

ՆԱՄԱԿ ԱՌ ՆԱԽԱԳԱՀՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

Մեծ. Տէր Տիգրան Դ. Վարժ-պետեան, պատգամագրին առթիւ, առ Նախագահն Միացեալ Նահանգաց յղած է նամակ մի, յորում Նախագահին խօսքերն Հայոց մասին ի մէջ բերելէ յետոյ կ'ասէ—

«Այն իրողութիւն որ այս բոլորին բացատրութիւնն կուտայ, այն է որ Հայք քրիստոնեայ են և Թուրքք՝ մահմետական։ Ըստ մահմետական կրօնի քրիստոնեայն չունի ո և է իրաւունք զոր մահմետականն յարգել պարտաւորի։ Երեւակայեցէք մեր կացութիւնն, ընդ բացարձակ կառավարութեամբ մի որ էապէս հիմնեալ է զմեզ իբրև օրինազանց նկատող կրօնի մի վերայ։ Մեր կեանք, ստացուածք, կնոջ պատիւ, ամենայն են ի ձեռս չարագործին, և եթէ գանգատիմք, մեզ կ'ասեն թէ քրիստոնեայ մի չէ կարող վկայութիւն տալ ի դատարանի։ Միթէ զարմանալի՞ է եթէ այս վիճակի մէջ Հայք յապստամբութիւն մտաբերեն։ Ձեր Նախահարք ապստամբեցան չայի մէկ փաունտին վերայ երեք բէննի տուրք վճարելն յանձն չառնելով,

մեք ապստամբելու չե՞մք մեր կանանց պատիւն պաշտպանելու համար։ Բայց ըստուգելու համար թէ մեք պարզապէս անկարգ յուզիչնե՞ր եմք թէ անբռնաբարելի իրաւունք պահանջող զգայուն ժողովուրդ, կը խնդրեմ որ քննէք մեր շարժմանց նպատակն։ Թուրքիայէն անկա՞խ լինիլ կը խնդրեմք մեք արդեօք։ Ամենեւին ոչ։ Միայն կը խնդրեմք այս ինչ չափով ինքնավարութիւն, շատ նուազ քան զոր ձեր Նահանգներն կը վայելեն ընդհանուր կառավարութեան ներքև։ Գլխաւոր բանն զոր կը խնդրեմք, այն է որ մեր կառավարիչն չլինի մահմետական, վասն զի անհնար է արդարութիւն յուսալ այնպիսի մէկէ մի որ զքրիստոնէական կրօնն թշնամանք կը համարի իւր Աստուծոյն։ Նաև կը բաղձամք որ մեք ևս խօսելիք ունենամք մեզմէ առնուազ տրոց ծախսուելուն կերպին նկատմամբ, թէ արդեօք պէտք է մխոուի Սուլթանին սիրելեաց քմահաճոյքի՞ն համար յափունս Պոռֆորի կամ թէ մեր երկրին մէջ երկաթուղիներ, կամուրջներ Ի. դպրոցներ չինելու։ Բռնապետ մի կրնայ զայս կոչել դաւաճանութիւն, բայց ճշմարիտ Ամերիկացի մի պարտաւորութիւն պարտի անուանել զայն։

... Տէր Նախագահ, յանչափս ուրախ եմ որ Ամերիկայի առաջին քաղաքացին զհայկական խնդիրն իւր ուշադրութեան արժանի գտած է, քանզի վստահ եմ թէ երբ այս երկրին ժողովուրդն լիովին հասկանայ մեր կացութիւնն, պիտի փրկէ զմեզ ջնջուելէ, — քաղաքականութիւն կամ ոչ։»

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ԲԱՂԱԲԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐՊԵՐ ԱՑՑԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

Հայայատուկ թերութեանց մին է ամչկոտութիւնն։

Ստրկութեան վարժուած ժողովրդի մէջ քաղաքավարութեան ցած կերպեր ընականօրէն կը տարածուին և անաւադն աւագին առջեւ ինքզինք ամենայն պատուոյ անարժան կը համարի։ Մեր երիտասարդներուն մէջ կան որք քաղաքակիրթ ազգաց հարարակ կերպերն իւրացունելու և ի գործ դնելու կ'ամաչեն, իբր թէ իրենք զիրենք մարդու տեղ դնել չհամարձակէին։

Մերայինք ներկայանալու և ներկայելու պատուական սովորութեան դժուար կը վարժուին։ Կայ երիտասարդ որ նպատակաւ մի կ'այցելէ մէկուն, կ'երթայ կը նստի, և հիւրնկալն է որ կը ստիպուի հարցմամբք որպէս թէ աքցանով քաշել հանել անխօս բերանէն տեղեկութիւններ և այցելութեան նպատակն։ Ինչ՞ է ձեր անուն,— ո՞ր տեղացի էք— ինչ՞ կ'անէք— ինչ՞ է ձեր այցելութեան առիթն։ Այսպիսի հարցուփորներով պէտք է խօսեցունել 20—25 տարեկան մանուկ մի, որ եթէ ինքզինք մարդու տեղ դնէր, ներս մտած ատեն կ'ասէր։—«Տէր, ես թագաւոր թագաւորեան եմ, այս քաղաքն գալու առիթ ունենալով բաղձացի ձեզ հետ կարճ տեսութիւն մ'անել։» Կամ «իմ անունս է Սարգիս Սարգիսեան, կ'ուզամ ձենէ խնդրել որ, եթէ կարելի է, ինձ մատուցանէք այս ինչ ծառայութիւն։»

Կը պատահի նաև որ երիտասարդ մի կը տանի զոք իւր ծանօթ մէկուն քով։ կը նստին երկուքն ալ, և հիւրնկալն կը ըստիպուի հարցնել թէ ո՞վ է պարոնն, ինչ է անունն ևն։ Ո՛րքան աւելի լաւ կը լինէր եթէ ներս մտած վայրկենին՝ դեռ ոտքի վերայ ծանօթն ներկայէր զանծանօթն և ասէր— «կը ներկայեմ ձեզ բարեկամս Կիրակոս Կիրակոսեան,» կամ «Պարոն Կ. Կ. է այս» և յաւելոյր ուրիշ յարմար տեղեկութիւն մի։

Երիտասարդ կայ որ տեսակցութեան մէջ «չնորհակալ եմ,» «ուրախ եմ,» «կը ցաւիմ,» «ներեցէք,» «թոգութիւն կը խնդրեմ,» «եթէ կը հաճիք,» և այլ այդպիսի խօսքեր գործածելու կ'ամաչէ, դիտնալով թէ քաղաքակիրթ մարդոց սովորութիւններ են դոքա։ Միթէ Հայ գործաւորին կը վայլէ՞ քաղաքակիրթ մարդու պէս խօսիլ...։

Միանգամ պատուաւոր Հայ ընտանիքի մի այցելած էին մի քանի երիտասարդներ, Նիւ Եորքի մէջ։ Սուրճ բերին և ի հարկէ նախ. հիւրերուն մատուցին։ Առաջին երիտասարդն մերժեց, խնդրելով որ նախ Մեծ. տանուտեառն մատուցանեն. տանուտէրն որ՝ թէպէտ հասակն առած՝ քաղաքակիրթ ոք էր, չէր կարող ընդու-

նիլ զայդ, և քաղաքավարութեամբ աղաչեց որ հիւրն առնու նախ. սակայն երիտասարդն դարձեալ պնդեց և բաւական ծիծաղելի բան եղաւ այդ ընդդիմութիւն որ բոլորովին անտեղի էր: Թուրք և Թրքահայ ընկերութեան մէջ կրնայ այդպիսի կոպտութիւն քաղաքավարական համարուիլ, բայց քաղաքակիրթ ընկերութեան մէջ անընդունելի է:

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԵՒ ՍՈՖԹԱՆԵՐՆ

Վիէննայէն կը հեռագրեն թէ Սուլթանն շատ սրտմտած է Սուլթան Մահամէտ Փէթիհի Մզկիթին պատերուն վերայ փակցուած յայտարարութեանց համար որ կը կարծուի թէ պարոն սոփթաներուն ձեռագիրն է: Խուզարկութիւնք չկարացին երեւան հանել հեղինակներն: Փատիշահն հրաման արած է որ Ռամազանի նախընթաց երեք ամիսներն սոփթայք երթան իրենց գաւառներն անցունեն, որոյ համար հարկաւոր ծախքն վճարած է:

ՍԹԱՆՏԱՐՏ կը պատմէ թէ երբ Սըր Քլար Ֆորտ, Անգլիոյ դեսպանն ի Կ. Պոլիս, հրաժեշտ առաւ Սուլթանէն, սա յայտնեց դեսպանին թէ ցաւով կը բաժնուէր դիւանագէտէ մի որոյ հետ բարեկամական յարաբերութիւններ ունեցած էր, և նուիրեր է նմա, իբրեւ յիշատակ, թանկագին ասեղ մի փողկապի:

Ուոքիկընէն կը գրէ մեզ թղթակից մի.—

Կը յուսամ թէ ներելի պիտի ըլլայ ինձ յիշեցունել Հայերուս մեծ մեղք մը: Ի՞նչ մեղք է այս: Ամերիկայի մէջ շատոնց եկած և բաւական դրամի տէր դարձած Հայեր կան, որոնք անտարբեր կեցեր են այժմ երբ գործի սովը սոսկալի կերպով կը ճնշէ հայ գործաւորները, որոնք տունը նստած են ցաւ ի ցաւ բարդած, պանդուխտ, անմխիթար, անգործ և անհաց: Միթէ եղբայրասիրութիւնը կը պահանջէ՞ որ ունեւորները իրենց դրամը պանքաները դնեն և կարօտութեան մէջ մաշողներուն փոխ չտան ամենեւին, քանի որ վստահ են թէ անոնք կրնան յետոյ չահիլ և հատուցմորէն վճարել իրենց պարտքերը: Կը վախեմ թէ այս խօսքս շատերուն ծաղրելու նիւթ մի պիտի ըլլայ, բայց ոմանց խիղճը կրնայ արթնցունել:

Անգլևհայկական Ընկերակցութեան, որ ի Լոնտրա, նախագահն Տէր Ֆ. Ս. Սթիվընսըն, ՆԻՈՒ ՐԻՎԻՈՒ անգլիական հանդէսին Դեկտ.ի թուոյն մէջ հզօր և պատուական պատասխանով մի կը հերքէ ՍԱՏԸԳԻ խեղճ և տկար յօդուածն զոր յիշած էինք «ՀԱՅՔ»ի 22դ թուով:

Նիւ Եորքի TRIBUNE թերթն իւր Դեկտ. 24 (կիրակի աւուր) թուով հրատարակած է «ՀԱՅՔ»ի խմբագրին նամակն առ Միացեալ Նահանգաց Նախագահն:

Անցեալ Դեկտ. ամսոյ մէջ այլ եւ այլ երկիրներէ Ամերիկա եկող օտարականաց թիւն է 11,262: Ասոնց մէջ Իտալացիք են քան զամենայն շատուորք: Վիճակագրութիւնն կը ցուցնէ թէ այդ գաղթողաց իբրր կէսն առանց արհեստի եւ գործի են: Երեք հազար հոգի ետ դարձուած են իբրեւ անկարող գրելու եւ կարդալու:

Խարբերդի Եփրատ գոլէճի նախագահ ծերունի Պատ. Ֆուլըր պաշտօնէն հրաժարած է և Պատ. Պարթըն նախագահ կարգուած է:

Բարիզի Le Cri-cri կիսամսեայ Դեկտ. 15 թուոյն մէջ կայ Ն. Բ. Իշխան Լուսինեանի կենսագրութիւնն և պատկերն:

Ն. Բ. Իշխան Լուսինեանի անուան ձօնեալ դաշնակային երաժշտութիւն մի ERZEROUM-GALOP, Souvenir d'Armenie (Յիշատակ Հայաստանի) հրատարակուեցաւ ի Բարիզ: Հեղինակն է Frederic Brevet Ուրիշ կտոր մ'ալ լոյս տեսաւ, ARMENIA, հեղինակութեամբ Adrien Danversի:

Փրոֆ. Մ. Չերազի Notes sur la Mythologie Armenienne (Ծանօթութիւնք Հայկական Դիւցաբանութեան վերայ) որ մասն առ մասն հրատարակուած էր ԼԱՌՄԷՆԻԻ մէջ, լոյս տեսաւ առանձինն.

ԱԶԳ.
ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ
ՏԱՐԻ ԾԲ 1894—ՌՅԽԳ
Ա.— Բացուած է Բազմավէպի 1894

տարեոյ բաժանորդագրութիւնն տարեկան բաժանորդագինն (10 ֆրանք կամ 4 ռուբլի կանխիկ վճարելի) և այլ պայմանք նոյն են։

Բ.— Բաղմավիպի ամսական ծաւալը միշտ երեք թերթ է, բայց յաւելուածք կա կը լինին ըստ պարագային։

Գ. Բովանդակութիւնն աւելի ճոխ է, և հետաքրքրական՝ նիւթոց զանազանութեամբ, որ են՝ Հայկական. — Բանասիրական.— Պատմական. — Գեղարուեստական (պատկերօք).— Բանաստեղծական. — Գիտական և Գիւտք, և այլն։

Դ. Ամեն ամսոյ սկիզբն բաժանորդաց ձեռքն կը հասնի ի բաց առեալ անակնկալ դէպք։

Ե. Մեծ. բաժանորդք որք կը ցանկան առաջիկայ տարեոյս պրակները ընդունել, պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնն որոշ հասցէիւ կամ առ խմբագրութիւնս և կամ առ գործակալս մեր*։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Ը. ՏԱՐԻ

«Հանդէս» առաջիկայ տարին կը հրատարակուի նոյն ծաւալով աւելի ճոխ և բաղմակողմանի բովանդակութեամբ։

Բաժանորդագինն և այլ ամենայն պայմանք նոյն կը մնան։

Կը խնդրենք մեր բաժանորդներէն օր յառաջ նորոգել բաժանորդագրութիւնը, դիմելով մեր գործակալութեանց։

Շնորհակալութեամբ ստացանք Գամառ Քաթիպայի ընտիր երկասիրութեանց երկհատոր հաւաքածոյն, խմբագրութեամբ Փրոֆ. Գ. Խալաթեանի։

Նաև շնորհակալութեամբ ստացանք «Ղլուսինեան Տուն» գերմաներէն լեզուաւ աշխատասիրութիւն մեր լուսինեան տան պատմութեան վերայ, տպեալ ի Դրիէսդ, 1894։

---

*Կը խնդրուի ի Մեծ. բաժանորդաց որ Յունուար ամսաթերթն ընդունելէ յետոյ հաճին յղել բաժանորդագինը եթէ չեն յղած, զի չուղարկուցաց կը դադրեցուի։ ԽՄԲ.

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ֆիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ՄԵԾԻԿԵԱՆԵՂԲԱՐՔ

Կրնան ամեն տեղ գտնուող Հայոց ամեն ուզած բաներն Նիւ Եորք քաղաքիս մէջ ամենաաժան գնովն գտնել և ուղարկել իրենց ուզած տեղերն. մանաւանդ արևելեան ուտելիք և խմելիք ներածուած ուղղակի մեր բնիկ երկրէն։ Նաև հայրենիք վերադարձող հայրենակցաց ճամբորդութեան պիտոյքներն կրնանք հայթայթել մենալաւ կերպովն։

MEDZINGIAN BROTHERS,

407 E. 15th St., New York.

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ· աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան· Տպարան Մ· Ս· Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԴԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած· գրեաց Մ· Ս· Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր·

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ· Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցուցնելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։ Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ· Ս· Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրականն տեսութիւն ի Մ· Ս· Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

*

* *

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ· ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանելու թէ
1554 B,way
46 և 47 փողոցներուն մէջև
Constantinople Bazzar-ի, (ԿՈՆՍԹԱՆԹԻՆՈՊԼ ՊԱԶԱՐ) մէջ ունի Թրքական մեծաքանակ գորգեր(խալիներ)և Թրքական ուրիշ ապրանք, զորս կ'ուզէ բոլորովին ծախել լմնցունելոյժ ԴԻՒՐԱԳՆԻ, ՀՈԼՍԷՅԼՈՎ (wholesale)։ Արդ, վաճառականներ որոնք այս գործով կը զբաղին, կրնան այս պատեհութենէն օգուտ քաղել, ժամանակին հոլսէյլ ապրանք գնելու։ Նաև այն հայրենակիցներ որոնք կը փափաքին ծննդեան և նոր տարւոյ առթիւ ընծայ տալ իրենց բարեկամաց, կրնան մեր պազարէն գնել իրենց ուզածն, թէ՛ ԸՆՏԻՐ և թէ ԱԺԱՆ։

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ·

ԳԵԶԱԳԻՐՔ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս մասին հեռագրքիր եղողներու «Հայք»ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ· Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆ